# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 հոկտեմբերի 2013 թվականի N 495-Ա

ք. Հրազդան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի սեպտեմբերի 28-ի N 1030-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2014թվականի միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետի 2013 թվականի
հոկտեմբերի 23-ի N 495-Ա որոշման

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ու Յ Ց

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարող մարմինը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելը | թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելում | Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչություն<br>Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Կոտայքի մարզային վարչություն<br>Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Կոտայքի տարածքային ստորաբաժանումներ<br>Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի զինվորական կոմիսարիատներ<br>Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան | 2014 թվականի ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | 2.1. Թմրամիջոցների օգտագործումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն | թմրամիջոցների օգտագործումը դադարեցրած, ռեմիսիայի շրջանում գտնվող, բուժման կուրսն ավարտած անձանց | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության | 2014 թվականի ընթացքում | ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2.2. Նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձանց, որոնք գտնվում են դադարի (ռեմիսիայի) շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը, պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկելը | ինտեգրումը հասարակություն | վարչություն | | |
| 3. | Սոցիալական ծառայությունների շրջանակում՝ թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքների ամբողջական գնահատում և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում | սոցիալական ծրագրերում թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական անհրա-ժեշտ օգնության ցուցաբերում | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն | 2014 թվականի ընթացքում | ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ |
| 4. | Ըստ բնակության վայրերի՝ պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում | համայնքների բակերում և հանգստի գոտիներում (զբոսայգիներ, պուրակներ) խաղահրապարակների ստեղծում՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով (պտտաձողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցման և ձգումների հա-մակցված հարմարանքներ ու սարքեր և այլն) | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություններ,<br>Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներ | 2014 թվականի ընթացքում | ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ |